

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35-Պ ՏԱՐԻ

1886 ՄԱՅԻՍ 24

ԹԻԻ 3823

ԿՈՆՏԱՆՆՈՒԹՅՈՒՆ, ՇԱԲԱԹ 24 ՄԱՅԻ

ԱԶԳԱՅԻՆ

ՄԱՐՏԻՉ ԻՄԻՆԻ ՅՕՐԵԼԵԱՆԸ

ՄՈՍԿՈՒԱ, 49 Ապրիլ

Դժուար է գրչի մի շեշտակի հարուստով նկարագրել այն փառայեղ յօրելեանը, որ տեղի ունեցաւ ասորիքի 17-ին Լազարեան Ճեմարանում ի պատիւ հայազն հռչակաւոր գիտնական Մկրտիչ Էմինի: Յառաջ քան ալեւոր ծերունու մտնելն Ճեմարանի մանկավարժական խորհրդի շքեղ դահլիճը, զերջինս լի էր արդէն հանդիսականների խումբն ընտանիքներով: Այստեղ էին նոյնպէս զանազան պատգամաւորութիւններ Մոսկուայի Կայսերական Համալսարանի կողմից, հնագիտական ընկերութեան, ռուսաց գեղարուեստական գրականութեան յիւրողների ընկերութեան եւ Մոսկուայի հինգերորդ գիմնազիոնի կողմից, ուր Պ. Էմինը գիրեկատօր էր մինչեւ 1876 թ: Աւագ մատենադարանում ժողովուած էին 12 ժամին բազմաթիւ հայ ուսանողներ, որոնց մեծագոյն մասն Ճեմարանիս վաղեմի աշակերտներն էին. այս մատենադարանի շարունակութիւնը կազմում է խորհրդի եւ քննութեանց ընդարձակ եւ շքեղ դահլիճը, որի աջ առջ կարգաւորուած է միշտ թագաւոր-կայսեր ամբողջ հասակաւ իւզանկար պատկերով եւ

Լազարեան պերճ տոհմի պատկերներով: Կայսեր պատկերի առաջ շինուած է մի գեղեցիկ ամբիօն, որ մասամբ ծածկուած էր դափնեայ թուփերի մէջ. ամբիօնի առաջ կանգնած է մի սեղան կարմիր մահուդով ծածկած. սեղանի վրայ դրուած են Ղ. Ա. լիշտեանի «Սիսուան»-ը, Ռաֆ. Պատկանեանի արծաթէ դրիչը, բազմաթիւ ուղերձներ, համակրական նամակներ, տնկուն հեռագիրներ, աշխարհիս հեռաւորագոյն կողմերից ուղարկուած ի պատիւ Պ. Էմինի: Սեղանի ետեւը շարուած են մի քանի կարգ բազմաթիւներ եւ ամբիօններ: Ամբիօնից դէպի աջ, բարձր պատուանդանի վրայ կանգնած է պատկառելի Պ. Էմինի իւզանկար պատկերը, վարդաբաւ դափնեայ սլոսակներով: Դահլիճի շարունակութիւնն է հանքարանական կարինետը, ուր շարուած կանգնած են Ճեմարանիս վերին դասարանների աշակերտները Ն. յց մինչեւ Բ. դ. իրանց երկու դաստիարակներով:

Մէկ ժամից քառորդ էր անցել, երբ յանկարծ հանդիսականների մէջ մի խուլ իրարանցում եւ յուզումն երեւցաւ. մի վայրկեանում դահլիճում տիրեց խորին լռութիւն: Աթոռները յանկարծակի շարուեցան դէս ու դէն, համայն ժողովուրդը ոտի ելաւ եւ խորին յարգանքօք ողջունեց մի աշխոյժ ծերունուն, որ, Ճեմարանիս գիրեկատօր Պ. Կ. Քանանեանցի ուղեկցութեամբ, այդ միջոցին չուտափոյթ մտնում էր դահլիճ: Դա ազգային լուսաւորութեան նախարար Պ. Յովհաննէս Դեղեալեանն էր, նախկին աշակերտ Լազարեան Ճեմարանի եւ ընկերակից Պ. Էմինի: Եւ ահա նորին բարձր գերազանցութիւնը մի օր առաջ ժամանել էր Ս. Պետերբուրգից Մոսկուա, որ

եւէկ ապրիլի 17ին իւր ներկայութեամբ յարգէ իւր հին ընկերի — Պ. Էմինի յիսնամեայ յօբելեանը : Ինքն ծերունի գիտնականը տակաւին բացակայ էր : Պ. Նախարարը սկսաւ խօսել Համալսարանի թեկտորի եւ պրոֆեսսորների հետ, եւ Պ. Քանանեանցը պատիւ ունեցաւ ներկայացնելու նորին բարձր գերազանցութեան հանդիսականներից մի քանիսին : Հատերին հայ հասարակութիւնից Պ. Նախարարը ճանաչում էր անձամբ :

Դրանից յետոյ քսան րոպէ չանցած, յանկարծ ամբողջ դահլիճը թնդաց յարատեւ եւ սարսափելի ծափահարութիւններից : Եւ ահա դուռն կողմից՝ ժողովրդի մէջ մի լայն ճանապարհ բացուեցաւ, ուր տեղից դողդոջուն եւ հեզիկ քայլերով մտնելով էր ալեօք զարդարեալ փոքր հասակաւ ծերունի Պ. Էմինը, յենով Նլրա Լազարեվիչ Պ. Սերբերեակովի ձեռքի վրայ, որ Լաւարեան Ճեմարանի մասնագիտական գ.ս.տարաններում աւանդում է վրաց լեզուն : Վերին աստիճանի սրտաշարժ տեսարան ներկայացաւ մեր աչքին : Հասարակաց բարձրաձայն համակրական ցոյցերի եւ ծափահարութեանց միջոցին, Պ. Նախարարը ընդառաջ շտապեց Պ. Էմինի, որ հազիւ մտել էր դահլիճ, գլորկեց նրան եւ երեք անգամ համբուրելով, բռնեց ձեռքից ու տարաւ բազմեցուց իւր մօտ, սեղանի հանդէպ : Ձնաշխարհիկ էր այն րոպէին ծերունու պատկառելի կերպարանքը : Ըռռ ու մունջ հոգեզմայլութիւնից զրգռուած, արտասուքը կաթիլ կաթիլ հոսում էր ակնոցների տակից : Պ. Նախարարը աշխատում էր սիւրիւսել ու հանդարտել ծերունու յուզմունքը : Աննկարագրելի էր այդ տեսարանը : Հանդիսականներից շատերը անզօր էին զսպելու իրանց եւ նոյնպէս արտասուեցան : Լուսթիւնը տեւեց մի քանի րոպէ : Վերջապէս, երբ ամենեքեան նստեցին իրանց տեղերը, ամբիօնի վրայ երեւցաւ Պ. Գր. Խալաթեանցը եւ կարգաց հասարակաց ուղերձը, որ բովանդակում էր Պ. Էմինի յիսնամեայ բեղմնաւոր գործունեութեան նկարագիրը : Ուղերձը լի էր հանդիսականների ստորագրութեամբ : Յետոյ ամբիօն բարձրացաւ Ճեմարանիս դիրեկտոր Պ. Գ. Քանանեանցը եւ կարգաց մեր Վեհափառ Մական Ա. Կաթողիկոսի

գեղեցիկ նորհաւորական կոնդակը, որ վերջանում էր հայրապետական օրհնութեամբ եւ բարեմաղթութեամբ : Պ. Էմինը այդմիջոցին դարձեալ արտասանուեցաւ : Դրանից յետոյ Մոսկուայի համայն տպարանների ընդհանուր տեսուչ Պ. Ջարմայր Մսերեանցը կարգաց Կ. Պոլսոյ Սրբազան Յարութիւն Պատրիարքի ուղերձը : Մոսկուայի Կոյսերական Համալսարանի թեկտոր Պ. Բոգոլեպովը ամբիօնից յայտնեց, թէ Համալսարանի խորհուրդը, ապրիլի 4ին տեղի ունեցած նիստում, Պ. Էմինին ընտրել է Համալսարանի պատուաւոր անդամ : Հնագիտական ընկերութեան անդամներից մինը յայտնեց, թէ ընկերութիւնը Պ. Էմինին իւր գործող անդամն է ճանաչում : Պ. Գր. Ձանչեանցը յայտնեց, թէ ռուսաց գեղարուեստական գրականութեան սիրողների ընկերութիւնը, ի նկատի ունենալով Պ. Էմինի օրինակելի թարգմանութիւնները եւ գիտնական յօդուածները, քննութիւնները, որոնցով ճոխացրել է ռուսաց գրականութիւնը, իւր անդամ է ընտրում նրան : Մարդաբանական ընկերութեան պատգամաւորը յայտնելով, թէ լեզուագիտութիւնը եւ պատմութիւնը մեծամեծ ծառայութիւններ են մատուցել մինչեւ այժմ մարդաբանութեան, ուստի ընկերութիւնը, Պ. Էմինին, նորա երկասիրութեանց համար, իւր անդամ է ընտրում : Հինգերորդ գիմնադիօնի ներկայացուցիչը, յայտնելով, թէ գիմնադիօնը իւր կազմակերպութեամբ պարտական է յատկապէս Պ. Էմինի ժրջան աշխատանաց, իւր պաշտօնից կողմից ողջունեց ծերունուն, նորա յիսնամեայ յօբելեանի առթիւ : Պ. Էմինը ոտի ելանելով, չափազանց յուզուած, դողդոջուն ձայնով յայտնեց իւր շնորհակալութիւնը վերոյիշեալ անձանց եւ ասաց հետեւեալը : « Ես չեմ ծնուած Հայաստանի հողի վրայ, այլ Նոր-Ջուղայում, Իսպահանի մօտ՝ Պարսկաստանում : Ինն տարեկան հասակում ծնողներս ինձ տարան Կալիփուտա քաղաքը Հնդկաստանի, ուր ես ուսանում էի ճեմարանում որ մինչեւ այժմ գոյութիւն ունի (*) : Տասն եւ հինգ տարե-

(*) Պ. Էմինը ուսանում էր Մարդասիրական ճեմարանում երեւելի հայկաբան Մեսրոպ Թադիագեանցի եւ Յով. Աւդալեանի մօտ : Թադիագեանցը,

կան հասկում ես նստայ Շվեդացւոց նաւը, ժամանեցի Ստոկհոլմ, այնտեղից ֆինլանդիայի վրայով եկայ այստեղ: Ճակատագիրը ինձ ձգեց Գանգէսի ափերից դէպի Ռուսաստանի սիրտը: Այնուհետք ծերունին էլ չը կարողացաւ շարունակել իւր խօսքը: Ամբիօնի վերայ միւս անգամ երեւցաւ Պ. Գ. Քանանեանցը եւ կարգաց Քրանսերէն լեզուաւ կոմս Լօռու-Մելիքեանի շնորհաւորական հեռագիրը Նիցցայից, Նախընտանի բաղաբապետ Պ. Սալթիկովի հեռագիրը որպէս եւ Ռաֆ. Պատկանեանի: Պ. Մսերեանց կարգաց Սուբիաս եպիսկոպոս Պարզեանի ոտանաւորները եւ Զմիւռնիոյ առաջնորդ Մելիքսեդեկ Սրբազան Մուրադեանի հեռագիրը: Պ. Սերբերեակովը կարգաց իշխ. Զաւլաւաձէի հեռագիրը: Պ. Խալաթեանցը կարգաց Գրիգոր եպիսկոպոս Աղափրեան Սրբազանի հեռագիրը. այս Սըրբազանը երբեմն աչակերտ էր Լազարեան ձեմարանում, ուր եւ աւարտեց իւր ուսումն եւ կրթութիւնը Պ. Էմինի օրերում: Կոմս Լօռու-Մելիքեանը միայն երեք տարի է ունէր Լազարեան ձեմարանում եւ Պ. Էմինը պնտմում է, թէ կոմսը դեռ մանկութեան հասակում շատ ընդունակ եւ սրամիտ աչակերտ էր: Նոյն Պ. Խալաթեանցը, ի սիջի սյլ բազմաթիւ նամակների եւ ուղերձների, կարգաց նաեւ մեր պարբերական հրատարակութեանց հեռագիրները, այն է՝ «Արարատ» ի, «Արձագանք» ի, «Մըշակ» ի, «Մեղու» ի եւ, վերջապէս, «Նոր-Ղար» ի: Յետոյ Պ. Գ. Քանանեանցը դար-

Պ. Էմինի վկայութեամբ, մի չափազանց դործունեայ մարդ էր եւ ջերմ ազգասէր եւ չէր զլանում իւր բոլոր մտաւոր եւ բարոյական ոյժերը նուիրելու յինչեալ ձեմարանի յառաջագիւժութեան: Հաւանգամ նա ճանապարհորդութիւններ էր անում դէպի հեռաւոր աշխարհներ՝ նիւթական միջոցներ հաւաքելու համար այդ նպատակաւ: Իւր կեանքում թաղիպանը շատ թշնամիք է ունեցել, որոնք «չխտած են նորան արատաւորելու: Գուցէ այն թշնամեաց մինն էլ անյայտ հեղինակն է «Համառօտ կենսագրութեան Մեսրոպայ Դ. Թաղապետ, արարեալ յունիստէն ի կալկաթա յամի Տեառն 1870», որ մէջ է բերում Կ. Պոլսոյ Յովհաննէս Կ. Մկրեան քահանայն իւր խմբագրած գրքի էջերում, որ լոյս տեսաւ ներկայ 1886 թ. Թիֆլիզում, իբրեւ յաւելում «Արձագանք» ի:

Ծանօթ. հեղ.

ձեալ երեւցաւ ամբիօնի վերայ եւ կարգաց Պ. Պետերբուրգի Կայս. Համալսարանի Արեւելեան Փակութեթի հեռագիրը՝ երիցագոյն անդամ Վասիլիեվի ստորագրութեամբ եւ Ս. Պետերբուրգի Հայ Հասարակութեան հեռագիրը բազմաթիւ ստորագրութիւններով, Էլմիածնայ ակադեմիայի ընկնորի հեռագիրը, Ներսիսեան դպրոցի հեռագիրը: Պ. Խալաթեանցը կարգաց Կովկասի զանազան քաղաքներից ստացուած նամակները: Պ. Քանանեանցը կարգաց Պ. Կարիէի գեղեցիկ հեռագիրը, ուր այս Քրանսացի հայագէտը հաղորդում է, թէ ինքն հրատարակել է մի ուսումնական բրօշուր Պ. Էմինին նուիրեալ, եւ թէ այս աշխատութիւնը արդէն ուղարկուած է Մոսկվա, եւ գերմանացի հայագէտ Պ. Հիւմիլմանի կարճ նամակը Պ. Էմինի յօբեւեանի առթիւ: Երեք ժամին հանդէսը ընդհատուեցաւ այն դիտաւորութեամբ որ մնացեալ ուղերձների ու նամակների ընթերցանութիւնը նորոգվի «Էրմիտաժ» հիւրանոցում, ուր, ի սլատիւ Էմինի ճաշ պիտի տեղի ունենար հասարակութիւնից: Վերջապէս Պ. մինիստրը վեր կացաւ եւ Պ. Քանանեանցի հրաւիրանօք անցաւ ձեմարանի ընդունարանը, ուր պատրաստուած էր շօքօլաթ եւ թէյ: Հանդիսականները խուռն բազմութեամբ շրպապատեցին Պ. Էմինին, որ արտասուքը աչքերին ընդունում էր նոցա անկեղծ շնորհաւորութիւնները: Գարձեալ մօտեցաւ ծերունուն նորա մտերիմ բարեկամ Պ. Սերբերեակովը, բռնեց ձեռքից եւ նոյն հեղիկ քայլերով տարաւ նորան ընդունարան, ուր սպասում էր նոցա Պ. մինիստրը. կէս ժամ խօսեցին միմեանց հետ, թէյ վաշեցին միասին, ապա Պ. մենիստրը հրաժարական տալով մեկնեցաւ: Արդէն բոլոր հասարակութիւնը ցրուել էր, ընդունարանում մնացել էին միայն Պ. Էմինը Պ. Սերբերեակովը, այս վեհանձն եւ ազնիւ մարդը, որ արթուն աչքով հսկում էր անդադար ծերունու վերայ, որ չը լինի թէ չափազանց յուզմունքը մնասէ նորա տկար առողջութեանը: Այնուհետք երիտասարդ Պ. Խալաթեանցը նոյնպէս չէր հեռանում ծերունուց: Նոքա երեքն էլ արդէն դուրս էին գալիս ձեմարանից, երբ թղթաբերը ներս մտաւ եւ յանձնեց նոցա մի կապոց: Դորա մէջ Պ. Կարիէի գրքերն էին ուղարկուած

Պ. Էմինին: Մերունին բողոքովին հանդարտուած էր, քաղցր ժպիտը երեսին տուաւ ինձ իւր ողջոյնը ու Պ. Սերերբեկովի հետ նստաւ կառք եւ սլացաւ տուն:

Երեկոյեան վեց ժամին մօտ ես արդէն Էրմիտաժումն էի: Համարեա թէ մարդ չկար այնտեղ, բայց մի քանի բոսայեան յետոյ հանդիսականներն սկսան հաւաքուել: Կազմուեցան մի քանի խմբեր, ուր խօսակցութեան նիւթը, յայտնի բան է, օրուայ հանդէսն էր: Ամենքն առանց բացառութեան վիայում էին, թէ մինչեւ այժմ ոչ մի դիտնական հայ Եւրոպայում զեռ ևս չէ արժանացնել այն մեծ պատուին ու փառքին, ինչպէս պատկառելի Ժերունի Մկրտիչ Էմինը: Այս զարմանալի մարդը իւր ամբողջ կեանքում, մի հրաշալի յամառութեամբ, դնացել է ընտրած գիտնական ճանապարհով, առանց մի քայլ անգամ շեղուելու դորանից, միշտ ու անդադար գիտութեան հաւատարիմ ծառայ է եղել, սիրել է իւր լեզուն և նախնեաց մատենագրութիւնը իրօք և գործով, չէ թէ անիմաստ խօսքերով: Նա իւր հիանալի թարգմանութիւններով, բազմաթիւ լսումնական քննութիւններով, բրօշխարհէրով այնքան գրաւել է եւրոպական գիտնականների ուշադրութիւնը, որ այսուհետեւ Հայոց հին պատմագիրների և հեղինակների գրուածոց ուսումնասիրութիւնը մի անհրաժեշտ պահանջ է դարձել Եւրոպացոց համար: Բայց ահա Ժերունին մոռնում է ներս, հանդիսականները ընդառաջ են դնում նորա. վերջինիս ուշանալու պատճառը այն էր որ նա գնացել էր այլ միտիստրի մօտ այցելութեան: Նստում ենք սեղան. մեզ սեղանակից են նաեւ բոլոր վերոյիշեալ պատգամաւորները: Երրորդ սպասի միջոցին վեր է կենում տեղից Լ. Ճեմարանի դիրեկտոր այլ ֆանանեանցը եւ բարձրաձայն ալեւոր յօրհեւարի կենաց բաժակ է առաջարկում. սրտաբուրդիս ուրախութեամբ բազմականները ընդունում են առաջարկութիւնը եւ Էրմիտաժի ահագին, ընդարձակ դահլիճը թնդում է կէցցէներից եւ «բրավօ» աղաղակներից: Պ. Սերերբեկովը մի ազդու ճառ է կարդում, յետոյ Պ. Խալաթեանցն կարդում է մնացած հեռագիրները, նամակներն, մի քանի բան էլ նուիրում է իւր կողմից: Ապա Լ. Ճեմարանի

ուսուցիչներից մինը Հայոց լեզուաւ ողջունում է Պ. Էմինին, նորա յիսնամեայ գործունէութեան առթիւ. յիշելով այն մեծ ծառայութիւնները, որ նա մատուցել է հայ եւ ռուս հասարակութեան իբրեւ գիտնական եւ մանկավարժ, շեշտում է Պ. Էմինի բեղմնաւոր գործունէութիւնը Լազ. Ճեմարանում: Պ. Քատցուկը խօսում է իբրեւ մամուլի ներկայացուցիչ. միւս պատգամաւորները եւս յետ չեն մնում: Պ. Ներսիսեանց բաժակ է առաջարկում Լազ. Ճեմարանի բարգաւաճութեան համար: Պ. Զ. Մսերեանցը իւր քանի մի համակրական խօսքերի մէջ յիշում է, թէ Պ. Էմինի աշակերտները այժմ բարձր պաշտօններ են վարում, թէ հոգեւորական, թէ քաղաքական եւ թէ զինուորական ասպարէզում: Մի քանի ճառից յետոյ Պ. Էմինը յայտնեց ի լուր ամենեցունց, թէ ինքն միայն այժմ համոզուած է, յօրհեւանից յետոյ, թէ իւր գործունէութիւնը ի զուր չէ անցել հասարակութեանց համար: Տասն ժամին խնձոյքը վերջացաւ. 10 1/2 ին Պ. Էմինը մեկնեցաւ Էրմիտաժից: Հանդիսականները փառաւոր և հրաշալի յօրհեւանի աղղեցութեան ներքոյ միայն առաւօտեան երկու ժամին սկսան ցրուել: Վերջացնելով այս նկարագիրը, պարտ եմ համարում յիշել, որ Մոսկուայի համալսարանի հայ ուսանողներն եւս հատուցին իրենց բարոյական սպասքը Պ. Էմինին. ուսանողաց կողմից, Պ. Ալլահպերդեանը կարդաց մի դեղեցիկ ուղերձ. իսկ Պ. Բարխուդարեանը նոյն հայ ուսանողաց գրականական ակմբի կողմից կարգաց մի լաւ յօրինուած ուղերձ: Լազ. Ճեմարանի տաճկաց լեզուի դասաւոր Պ. Սակովը Կ. Պոլսոյ արեւելեան լեզուաց Յունաց ակմբի կողմից կարդաց յունարէն մի գեղեցիկ ուղերձ: Էրզրումի առաջնորդ Սր. Օրմանեանը նոյնպէս ուղարկել էր մի հեռագիր, որ իւր կարգին կարգացուեցաւ Լազարեան Ճեմարանում: Վերջացնելով յօդուածս, կ'աւելցնեմ այս եւս, որ բոլոր ուղեւորները, համակրական նամակները և հեռագիրները առանձին բրօշխարով պիտի հրատարակուեն իւր ժամանակին:

(ԱՐՁԱԳԱՆՔ)

Մ. ՇՈՎՐԵԱՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

— 000 —

ԲԺՇԿԱՅ ԵՒ ՎԻՐԱՔՈՒԺԻՅ ՎԱՐԺ.

ՆԻՒ-ԵՈՐՔԻ

ՆԻՒ-ԵՈՐՔ, 23 Ապրիլ 1886

Մաթի ընթերցողներէն շատեր կը յիշեն թերեւս թէ անցեալ տարի Մր. Զ. Վանտէրպիլը կէս միլիոն թաղեր նուիրեց Նիւ-Եորքի Բժշկաց եւ Վիրաբուժից վարժարան կոչուած բժշկական վարժարանի հոգաբարձութեան՝ նոյն վարժարանին համար հոյակապ շէնք մը կառուցանելու Նիւ-Եորքի իններորդ եւ տասներորդ ավելիներուն մէջտեղ յիսուն եւ իններորդ փողոցն, հանդէպ Րոչուէլը հիւանդանոցին։ Մր. Վանտէրպիլը իւր նուիրած գրամին մէկ մասով գնած էր յիշեալ փողոցին մէջ ընդարձակ գետին մը այս նպատակին համար, եւ մընացեալ դրամը զրկած էր հոգաբարձուաց ժողովոյ նախագահին, Տըք Տօլդընի, իրենդրեւով որ դրամը գործածուի շէնքին կառուցման եւ կահաւորման։ Քանի մ'ամիս առաջ հանգուցեալ Վանտէրպիլի փեսան, Մր. Սլօն, նոյն վարժարանին ուսուցիչ եւ բոլոր Վանտէրպիլեան գերդաստանին բըժիշկ Տըք Մադէլլին միջոցաւ ծանոյց թէ յօժար էր վարժարանին մօտ կառուցանել ծննդաբեր կանանց համար հիւանդանոց մը ուր աղքատ յղի կիներ ձրի խնամուին եւ դարմանուին իրենց ծննդաբերութենէն առաջ եւ ետքն որչափ ատեն որ դարմանի պէտք ունին։ Նոյն ատեն Տիկին Սլօն, դուստր Ուիլեամ Զ. Վանտէրպիլի խոստացաւ տալ նոր կառուցանելի հիւանդանոցին բոլոր անկողիններն եւ հիւանդաց ծախքերն։ Այս նպատակին համար այր եւ կին յատկացուցին իւր 250,000 թաւլէր։

Ասոր վրայ շատ ժամանակ չ'անցաւ երբ հանգուցեալ Ուիլեամ Զ. Վանտէրպիլի չորս արու որդիք նուիրեցին դարձեալ նոյն վարժարանին 250,000 թաւլէր ի յիշատակ իրենց հօր, եւ փափաք յայտնեցին որ վարժարանի հոգաբարձութիւնը գործածէ նոյն գումարն իբրեւ մշտնջենական դրամագլուխ

աղքատ հիւանդաց ձրի դեղ եւ դարման տալու համար։ Այսպէս բժշկական վարժարանը Վանտէրպիլեան գերդաստանին առատաձեռն նուէրներով օժտուեցաւ հոյակապ շէնքով, հիւանդանոցով եւ ընդ արձակ քիւիթի եւ ձրի դեղարանի համար մեծ դիւրութիւններով։ Նոր շէնքին հիմերը դրուեցան ամիսներ առաջ, եւ շինութիւնն յառաջ տարուեցաւ արագ արագ այնպէս որ երէկ, արեւմտեան քրիստոնէից Զատիկ Ճըքադալուցի օրն, խորհրդաւոր զուգադիւպութեամբ կատարուեցաւ հանդէս զետեղման անկեան վիմին այն շէնքերու յորս միշտ վառ պիտի ըլլան լուսոյ, յուսոյ եւ մարդասիրութեան ճրագներ։

Երէկ կէս օրէ ետքը մեծ խրատումն եւ անսովոր ոգեւորութիւն կը նշմարուէին յիսուն եւ իններորդ փողոցն, որ սովորաբար է այս մեծագորդ եւ ազնկայոյց քաղաքին հանդարտագոյն փողոցներէն մէկ։ Բժշկական ուսանողք յառաջադէպ նմանը չը տեսնուած մեծ բազմութեամբ կը դիմէին դէպ այն փողոցն, եւ այս անգամ կ'երեւէին աւելի զուարթ եւ եռանդալի քան ուրիշ անգամներ երբ կ'երթային նոյն փողոցին մէջ Րոչուէլը հիւանդանոցը տեսնելու վիրարութեական մեծ գործընթացներ, կամ ուսուցիչներէն ոմանց առաջնորդութեամբ քննելու հիւանդներ։ Վարժարանին հոգաբարձուաց եւ ուսուցչաց մարմինները գրեթէ ամբողջովին եկած էին որոշեալ ժամանակէն առաջ եւ մեծ հաճութեամբ կը նայէին ընդարձակ գետին վրայ ուր բազմաթիւ գործաւորներ կ'աշխատէին բարձրացունել որմերն գիտութեան եւ մարդասիրութեան նուիրեալ շէնքերու։ Գետին վերի ծայրը կառուցուած էր առժամանակեայ ամփիթատրոն մը որոյ նստարանները հակեալ կը նայէին դէպ ի դէպ մ'ազիւաներու, կրանիդի եւ շաղախի որ կը կազմէին հանդիսին նիւթերը։ Անկեան վէմն որ գրեթէ մէկ թօնօ ծանրութեամբ խոշոր կրանիդ մ'էր՝ հաստատուն պարաններով կախուած էր ճախարակէ մը պատրաստ իջնելու այն տեղն ուր մազթելի է որ երկար դարեր մնայ արձան յիշատակի Վանտէրպիլեան գերդաստանի առատաձեռնութեան։

Միջօրէն ետքը ժամն երկու եւ կէսին հետզհետէ սկսան դալ նշանաւոր քաղաքա-

գէտներ, երեւելի գիտուններ, համալսարանային երէցներ, միլիոնատէրեր եւ ուրիշ աստիճաններէ եւ կարգերէ մարդեր: Յիսուն եւ իններորդ փողոցը մէկ ավելնիւէ միւսը ծայրէ ծայր լեցուած էր փառաւոր կառքերով որոցմէ շատ քիչերը թերեւս ուրիշ անգամներ անցած էին այն փողոցէն: Յաւալի է որ հանդուցեալ Մր. Ուիլեամ Հ. Վանտէրպիլի երիցագոյն որդիք բացակայ կը գտնուէին քաղաքէն եւ միայն կրտսերացոյնն ի նոցանէ, երիտասարդն ճօրճ, որ հօրը տունը կը բնակի, եկած էր հօրը մեծ գործերէն միոյն հանգէսը տօնելու եւ իւր ձեռքը զետեղելու անկեան վէմը: Վերը յիշուած անկեան վիմին մօտ յատուկ նրստարաններ պահուած էին Վանտէրպիլիեան գերդաստանին անդամաց: Վանտէրպիլի երիցագոյն որդւոյն տիկինը, նորա անգրանիկ դուստրը, Վանտէրպիլի չորս փեսայներն եւ անոնց տիկիներն ինչպէս նաեւ ուրիշ ազգականք իրենց սքոյ հանդերձներով եկան եւ շատ համեստութեամբ եւ պարզութեամբ նստան իրենց յատկացուած նստարաններուն վրայ: Տիկինաց պարզ եւ վայելուչ զգեստներն եւ անոնց բարեկիրթ շարժումներն եւ խօսուածքը շատ հաճելի տպաւորութիւն ըրին վրաս, վասն զի բաւական մօտ ըլլալով կը լսէին անոնց խօսուածքն, եւ ինձ այնպէս կը թուէր թէ այս տիկնայք չէին խորհեր իրենց հարստութեան վրայ այնչափ որչափ կը խորհին ուրիշները:

Ժամը ճիշդ երեքին Գօլծմպիա գօլէճի մատրանապետը (Բժշկաց եւ Վիրաբուժից վարժարանը մէկ ձիւղն է Գօլծմպիա գօլէճին) Եպիսկոպոսական Եկեղեցւոյ ժամագիրքէն պարագային յարմար համառօտ աղօթք մը կարդալով բացաւ հանգէսը: Վարժարանին նախագահը, պատկառելի ծերունին Տօլթըն, մետաղեայ փոքրիկ սնտուկ մը բռնելով իւր ձեռաց մէջ ցուցուց հանդիսականաց, եւ ըսաւ թէ սնտուկին մէջ դրուած էին այլ եւ այլ օրինակներ գօլէճի տարեկան տեղեկագրերէն, Նիւ-Եորքի օրաթերթերէն եւ բժշկական լրագիրներէն, նաեւ օրինակն այն նամակին որով հանդուցեալ Մր. Վանտէրպիլի կը նուիրէր այն գետինը բժշկական վարժարանի հոգաբարձութեան, եւ հարկաւոր դրամ չէնքին կա-

ռուցման, օրինակ մը շնորհակալութեան թուղթին զոր վարժարանին հոգաբարձութիւնը մատուցած էր առատաձեռն նուիրատուին եւ այլ թուղթեր: Անկեան որմին մէջ տեղ մը բաց թողուած էր մետաղեայ սնտուկին համար, եւ Տօլթըն սնտուկը դնելով այն տեղն զոցեց մարմարեայ կափարչով մը զոր շաղախով ամրացուցին որմնագիրք: Ապա Տօլթըն հրաւիրեց զերիտասարդն ճօրճ Վանտէրպիլի յառաջ գալու եւ փւր ձեռքը դնելու անկեան վէմը: ճօրճ Վանտէրպիլի հանդիսականաց եռանդաբեր ծափահարութիւններով ելաւ իւր գերդաստանին միւս անդամաց մէջէն, եւ գալով անկեան գլուխը, դրաւ իւր ձեռքերը վիմին վրայ որ տակաւ սկսաւ իջնել: ճօրճ արծաթեայ մուրճով մը զոր ունէր ի ձեռին տուաւ երեք հարուած վիմին, եւ յետ նայելոյ չորս կողմն որպէս թէ ըստուգելու համար թէ վէմն ազէկ զետեղուած եւ ամրացած էր իւր տեղը, խոնարհութեամբ իջաւ վար, եւ ծափահարուեցաւ ուժգին: Յետոյ Մր. Չօնսի Մ. Տէբլի, որ ուան ատենախօսը, կարգաց ընտիր ուղերձ մը որոյ հետեւեալ մասերը թարգմանել արժան կը համարիմ.

«Մեր հրապարակալին գումարմանց մէջ ամենէն աւելի հրահանգիչ եւ հաճոյական են անոնք որ կը տօնեն կը հօջակեն մեր հասարակաց մարդկութեան լաւագոյն տարրը: Շահագործութեան ներկայ պայմաններու ամենի միջմունք կ'ընծայեն հնարաւորութիւններ անհատաւոր յաջողութեան, եւ կը գրգռեն հակառակութիւններ որ կ'ըստպառնան ընկերական կարգաց եւ ապահովութեան: Մինչ նուազ բարեբաղդը կը լեցուին թշնամութեամբ ոչ ոք յաջողագոյն եղբարս իւրեանց, եւ նոքա որ իրենց կարողութեամբ կամ ժառանգութեամբ տմբարձած են ի վեր քան զայլ կը կորուսանեն համակրութիւն առ գործաւորս, բաղմամբ ըմբ հասարակութեանց ներքին յարարութիւնը կ'ըլլան վտանգաւոր եւ անտանելի: Այս կէտին այն հարուստ մարդը որ կը հիմնէ կամ կ'օժտէ հաստատութիւն մը որ ընդարձակ եւ տեւական կերպով պիտի նպաստէ մարդոց բարօրութեան, կ'ըլլայ պետական մարդ ինչպէս եւ մարդասէր: Այսպիսի ոք կը տանի զմեզ ետ դէպ յառաջին

սկզբունքն ի ճանաչել մեր հասարակաց ծագումն եւ շահերը : Կուգանք ի վեր հանել թէ ինչ որ է նա , ամէնքը կարող են ըլլալ , եւ թէ էր ժամանակ երբ նա կամ նորա հայրը սկսան գործի չունելով ուրիշ դրամագլուխ բայց միայն ուղիղ , լաւ բարք եւ առողջութիւն : Մարդկային համակրութեան հոսանք կ'սկսին դարձեալ ընթանալ հիւզին եւ պալատին մէջտեղ , Բայց դիւրին խնդիր չէ իմաստութեամբ որոշել ինչպէս գործածել զրամը մարդասիրական նպատակ մը յառաջ տանելու : Շատ անգամ զրամը մասամբ կը վատնուի նուիրատուին փառասիրութիւնը յաղեցունելու : Մը . Վանտէրպիլդ իւր անձին տառապանօք մօտէն հասկըցած էր բժշկական հանճարոյ բարերար արգասիքն եւ տեսած էր թէ հնարաւոր էր այն հանճարոյ եւ ճարտարութեան աճիլը : Իւր զօրաւոր ողջմտութեամբ նշմարած էր թէ հոս բացուած էր իւր առջեւ բարիք գործելու անկախ աստարէզ մը յորում գիտութեան յառաջադիմութիւնը կրնայ յառաջ բերել ամենէն աւելի բարերար եւ բարեւէր արդիւնք : Գրատուններ , հիւանդանոցներ եւ արուեստական ու գրադիտական հաստատութիւններ կային բաւական թըւով : Մինչ հին աշխարհի մէջ կառավարութիւններ կը հիմնէին եւ կը պահպանէին բժշկական վարժարաններ , այս երկրին մէջ զրեթէ բժիշկներ միայն հանդիսացած էին պաշտպան այսպիսի վարժարաններու : Փորձութիւն կար Մը . Վանտէրպիլդի առջեւ հիմնելու բժշկական վարժարան մը որ իւր անուամբ կոչուէր , բայց քաղաքի մը մէջ ուր այնչափ համալսարաններ արդէն կային , տեսաւ թէ իմաստնագոյն կերպով գործածած կ'ըլլար իւր զրամը յատկացունելով զայն ընդարձակելու եւ բարձրացունելու հաստատութիւն մը որ իւր տարիքով , աւանդութիւններով եւ փորձառութեամբ անհաշուելի արժանիք ունէր եւ դրամագլուխ մը զոր հարստութիւնը չը կրնար ըստեղծել : Մը . Վանտէրպիլդ Բժշկաց և Վիրարութիւն վարժարանն ընտրելով , ընտրեց հնագոյնն ի տիս եւ կարգաւ ու արժանեօք հաւատարագոյնն լաւագունից : »

Ատենախօսը նկարագրեց վարժարանին ծագումն եւ մէկ դարէ ի վեր անոր ազդեցութիւնը բժշկութեան յառաջադիմութեան

վրայ յԱմերիկա , եւ շարունակեց իւր ճառայնայն . « Բժշկաց եւ Վիրարութիւն վարժարանը կ'ըլլայ աշխարհի ամենէն հզօր եւ լաւ կազմակերպեալ բժշկական վարժարաններէն մին շնորհիւ այն մեծ բարերարութեան զոր այսօր կը տօնենք , այս գետնին վրայ զոր նուիրած է Մը . Ուիլեամ Հ . Վանտէրպիլդ , եւ ուր անոր առատաձեռնութիւնը կը կառուցանէ , կը կահաւորէ եւ կ'օժտէ շէնք մը համապատասխան ներկային բոլոր պահանջմանց եւ ապագային պէտքերուն : Այս գետնին վրայ Մը . Ուիլեամ Տ . Սլօն կը կառուցանէ մայրութեան հիւանդանոց , եւ նորա տիկնոջ առատաձեռնութիւնը կուտայ հիւանդանոցին բոլոր անկողիններն եւ այլ ծախքերն , ձրի բանալով հիւանդանոցին դռներն բոլոր անոնց որ մայրութեան առաջին ցաւերու մէջ են : Նոյն ատեն չորեքին օրդիք հանդուցելոյն կը բանան դեղարան ձրի տալու աղքատաց միշտ եւ յաւէտ դեղ եւ բժշկական լաւագոյն խնամ , եւ կ'ընեն զայս ի յիշատակ իրենց սիրելի հօր , որուն , եթէ կենդանի ըլլար , այս գործ պիտի թուէր աւելի հաճելի , եւ հիմա է անոր օգուտն աւելի ընդունելի բան փառաւոր մահարձան . . . : Ուիլեամ Հ . Վանտէրպիլդ կը պարծէր իրեն բաղաբացի Նիւ-Եորքի , եւ բաց ի մեծ դումարներէն զորս նուիրեց Եգիպտական կոթողը Նիւ-Եորք բեր'լու եւ այս բժշկական վարժարանը կառուցանելու համար , առանց ցոյցի ըրած է ուրիշ մեծ նուէրներ այս քաղաքին կրօնական , բարեսիրական , արուեստական եւ կրթական ձեռնարկութեանց համար : Իցի՛ւ անոր օրինակը ներշնչէ ուրիշներ կատարելու այսպիսի գործեր որ սակաւուց միայն հնարաւոր են , բայց երբ իմաստութեամբ կատարուին՝ կրնան ընել մեր մայրաքաղաքը վեհ եւ գերազոյն յամենայնի որ կը կրթէ , կը բարձրացունէ և կ'աղնուացունէ մարդկային ազգը : »

Գօլէճի աշակերտը երիցս Կեցցէ դոչեցին Վանտէրպիլդեան գերդաստանի անդամոց , ատենախօսին , Գօլէճի նախագահին , վարժարանի հոգաբարձութեան եւ ուսուցչաց , մանաւանդ Տօք . Մաքլէյնի համար , որ ինչպէս ըսուեցաւ , Վանտէրպիլդեան գերդաստանին բժիշկն է , եւ մի-

ջոց եղած է վերոյիշեալ մեծագոյն նուէրները ձեռք բերելու :

Հուսկ ուրեմն Գօլօմպիա գօլէճի մատրանապետը տէրունական օրհնութեամբ մահէ հանդէսն , եւ հանգիստականք ցրուեցան ուրախութեամբ եւ գովելով մեծանուն նուիրատուին յիշատակը :

ԵԱՆՔԻՆ .

ԵՐԶԱՆԻԿ ՄԱՐԴ ՄԸ

(Շար . նախորդ թուէն)

Եթէ միանգամ բանտարկուէր վճռոյ մը զօրութեամբ , իւր բանտը պիտի ըլլար իրեն համար իբրեւ օրինաւոր բնակարան մը . բայց քանի՞ որ նա ամբաստանութեան վիճակի մէջ մնար , աւոր ո՞ր եւ է բնակարան մ'ընծայել հակասութիւն մ'էր . վասն զի բնակարան մը չ'ունենալուն համար ամբաստանեալ էր : Սակայն անկարելի էր ընդունիլ որ մարդ մը իւր զինուորական ծառայութիւնը կատարելու պարտականութենէն փախուստ տայ , կամ ինքզինք արդարացնէ զայն կատարած ըլլալուն՝ միայն ինքզինք ճանչցնել չ'ուզելով պարզսպէս : Այս գիւրին բան մ'էր :

Գատաւորն առիթ ունեցաւ այս մասին խորհրդակցելու զինուորագրութեան հրամանատարին հետ , որուն հետ սեղանի գլուխուեցաւ օր մը բարեկամուհւոյ մը տունը :

— Ուրեմն , երբ նա իւր դատաստարտութիւնը կրէ , պիտի սզէ՞ք զանի ինձմէ :

— Ամենայն ս'րով : Գաղղիացի՞ է :

— Այնպէս կը նմանի :

— Բայց ա՛յսչափը բաւական չէ : Գաղղիական բանակին մէջ օտարական չ'ընդունուիր : Գաղղիացի ըլլալը ապացուցանելու է :

— Իւր ծննդեան վկայագիրը չ'ունիմ որ գիտնամ :

— Ահա՛ դժուարութիւն մը : Քանի՞ տարեկան է :

— Երեսուն եւ հինգ քառասուն մը ըլլալու է :

— Տարիքը գիտնալս պէտք մ'է : Որովհետեւ եթէ տասն եւ ութ տարեկան չ'ըլլայ , զինուոր չը կրնար գրուիլ :

— Տասն եւ ութ տարեկանէն աւելի է :

— Ի՞նչպէս գիտէք : Մարդու մը տարիքը ակռաներուն նայելով չը գիտցուիր :

— Մօրուքն աղուոր մը եկած է :

— Սակայն մարդ տասն եւ եօթն տարեկան եղած տսենն ալ մօրուք կրնայ ունենալ : Ինչէ՞ն յայտնի է որ վաթսուն տարեկան չ'է :

— Ո՛չ , ո՛չ , ճերմակ մազ մը չ'ունի :

— Ես ալ չ'ունիմ , ազկից ի՞նչ կ'եղնէ . թուղթ , վկայագիր պէտք է :

— Այդ չի կայ . բնաւ և ո՛չ մէկ թուղթ մը :

— Այսու հանդերձ ձեզի հաճելի ըլլալու համար ամէն ձեռքէս եկածը պիտի ընեմ . բայց չ'եմ տեսներ ստուգիւ միջոց մը՝ որով կարենամ զինուորագրել մարդ մը , որ ո՛չ ազգութիւն ունի , ո՛չ տարիք , ո՛չ ալ անուն : Զեր մարդը բնաւ բան մը չ'ունի :

Հարցաքննիչ գատաւորը տեսաւ որ այս կերպով ալ այս գործս լուծում չ'ունէր , հետեւաբար հարկադրեցաւ Նիքօլա Տիւբօրը զրկել ոստիկանութեան ատեանը : Բայց սխալ ընթացք մը բռնած չ'ըլլալու համար , եւ զգալով բարեսրտութեան բնական զգացում մը ա՛յսպիսի մարդու մը համար որ հեղ եւ անմլաւ կ'երեւէր , թափառականութեան յանցանքն ալ մէկ կողմ դրաւ , պատճառելով ի՞նչ ամբաստանելոյն անբնական եւ անապրուստ ըլլալն ալ հատատուած չ'էր . և մի միայն անպարկեշտութեան յանցանքը մնաց :

Պարոն տ'Արվիլ չունչ առաւ այս որոշումն լսելով , եւ մինչեւ գատաստարտուելու ժամանակ կրցաւ խաղաղութեամբ վայելել առանձնութեան քաղցրութիւնները :

Արթիւր Բօմիէի երթալէն ի վեր՝ որն որ բանալէն հանուած էր դատաստանի ենթարկուելու համար եւ որ այլ եւս չ'էր երեւցած , առանձին խուցի մը մէջ վախուած էր , եւ անպիտան մարդոց մերձաւորութենէն աղատած՝ երկար օրեր կ'անցընէր առանց բան մ'ընելու , եւ վայելելով իւր մը-

տաց ազատութիւնը՝ զոր կը թողուր իւրեան իւր մարմնաւոր գերութիւնը :

Երկար տաէն ստատիկ գրգռութեան մը մէջ ապրած ըլլալով, այժմ հեշտարար հանդարտութիւն մը կ'զգար զինքը միայնակ տեսնելով, ամրագէտ եւ հաստատագէտ պաշտպանեալ երկաթեայ վանդակներով, թանձր որմերով եւ անհամար նիգերով ա'յն հալածման դէմ՝ զոր կրեւ տուած էր իւրեան իւր անզուգական կնոջ երկնային կատարելութիւնը : Այսուհետեւ իրեն համար ուշադրութիւն եւ խնամ ընծայող չը կար . եւ մէկը չը կար որ իւր դիմաց վրայ լրտեսէր իւր զգացմանց բացատրութիւնը՝ անմիջապէս զայն կատարելու համար : Ա'լ այնուհետեւ ո'չ պատրաստ սեղան կը գտնէր, ո'չ պատրաստ անկողին, ո'չ խաղաղութեան եւ երջանկութեան միջնորդող մը, ո'չ անտրատ կեանքի մը տեսարանը, եւ ո'չ ալ ամենայն առաքելութեանց օրինակը :

Ալ այնուհետեւ պարտաւորեալ չ'էր իւր ամէն տեսածին հաւանութիւն տալու, զոր կ'ընէր ըստ հարկի եւ յակամայից : Կրնար տրտնջալ, եւ իրաւունք եւ առիթ ունէր տրտնջալու այժմ :

Մանաւանդ երբ խաղաղ գիշերէ մը վերջը առաւօտուն աչքերը կը բանար, ճերմակ պատեր եւ փոփոխական երկնից մէկ անկիւնը կը տեսնէր, փոխանակ ա'յն անփոփոխ դիմաց՝ որ կը ներկայէր իւր աշաց պարտուց կատարում, խաղաղական կեանք եւ ամենայն բարի բնազդմանց լըրումը :

Երբեմն երբեմն կը թողուր իւր ա'յս քաղցր խորհուրդները, մտածելու համար թէ ի'նչ պիտի ընէր ա'յն օրը, երբ բանտէն դուրս արձակէին զինքը : Գիտէր որ այն տառն իրեն համար պիտի սկսէին կենաց դժուարութիւնք . վասն զի շատ պարկեշտ եւ բարի մարդ մ'ըլլալով՝ չ'էր ուզեր շարունակ բեռ ըլլալ ընկերութեան :

Իւր տունը թողելէն ի վեր գթութեան չնորհիւ ըրած էր իւր առաջին ճաշը, եւ ստացած էր 87 ֆրանք եւ 50 սանթիմը որով կը յուսար ապրիլ իւր ազատութեան առաջին օրերը . մասնաւոր բարեբարի մը չնորհիւ ընդունած էր իւր առաջին հանդերձները . եւ բարեգործական ընկերութիւն մը հայթայթած էր իւրեան այժմ հազած

զգեստները : Վերջապէս այս վայրկենիս կ'ապրէր ծախիւք նպաստողաց :

Այս ա'յսպէս չ'էր կրնար տեսել միշտ եւ հանապազ . իւր մտքէն չ'էր անցնէր բնաւ նորէն բանտ մտնել իրրեւ անուղղայ ոճրագործ մը, ո'չ ալ ձեռք կարկառել անցորդաց՝ իրրեւ անկար թշուառական մը : Կ'ուզէր իւր ապրուստն իւր աշխատութեամբ ինքը վաստկիլ . եւ գիտէր որ ա'յս ալ դիւրին բան մը չ'էր . սակայն ամէն բան աչքն առած էր, որ պէս զի նորէն չը կրէ իւր չըղթայն : Առանց ստակի ձգել երթալը հեռատեսութեան պակասութիւն չ'էր . հաշուեր էր որ, որովհետեւ խուզարկութիւններն ի դերեւ հանելու համար բոլոր ունեցածը ձեռքէ հանելու աստիճան յանձնառու եղած էր, հետեւապէս վրան ո'չ ոսկի կրնար պահել եւ ո'չ ալ պահել :

Չէր կրցած նաեւ վարկ մը բանալ տալ իրեն սեղանաւորի մը . վասն մի առաջին անգամ որ ներկայանար սեղանաւորին դըրամ առնելու համար, հո'ն դռնակին ետին նորէն պիտի գտնէր իւր կինը : Հետեւապէս աշխատութեամբ պարտ էր հայթայթել իւր ապրուստի միջոցները :

Սակայն ի'նչ տեսակ աշխատութեամբ :

Դեռ չ'էր գտած այս խնդրոյս լուծումը, երբ ոստիկանութեան դատարանին առջեւ երեւալու կոչուեցաւ, պատասխանելու համար ա'յն անկանոն վարմունքին նկատմամբ՝ որով յանցաւոր եղած էր :

Պ. տ'Արվիլ ներկայանալով ի դատարան, թէպէտ եւ իւր որոշումն անդառնալի էր, սակայն թեթեւ սրտաշարժութիւն մը զգաց . իւր յանցանաց որպիսութիւնը լսելով՝ բոլոր ներկայ եղողները դարձան երեսը նայեցան . եւ եղած ըննութեան հետաքրքրական եւ երգիծաբանական եղանակէն հասկցաւ թէ հասարակութիւնը կ'սպասէր այն դատերէն մէկուն՝ զորս ա'յնչափ կը սիրեն երիտասարդ վաստաբանք եւ ծերունի դրամատէրք :

Չէր ախորժեք ենթակայ ըլլալ լրագրոց տալիք գայթակղական լուրերուն, հետեւապէս միտքը դրաւ ինքզինք պաշտպանել . Բայց այս որոշումն փայլալի նման եկաւ անցաւ . մարդկային յարգանաց թելադրութիւնները մէկ կողմ դնելով նորէն ձեռք առաւ իւր կանխաւ բռնած ընթացքը, որո-

չելով ո՛չ վրիպիլ իւր երկրին դատական սո-
վորութեանց պարտական եղած յարգան-
քէն, ո՛չ ալ իւր շահուն պահանջած լռու-
թենէն:

— Միթէ դարձեալ, հարցուց իրեն նա.
խառաւ, չէ՞ք ուզեր ձեր ո՛վ ըլլալն ըսել:

— Ո՛չ, պարոն նախագահ:

— Անհաւատալի է արդարեւ որ ձեր
կարգէն մարդ մը կարենայ մոռնալ վայել-
չութեան օրէնքները: Մարդ չը կրնար հաս-
կընալ թէ ի՞նչ կրնայ ըլլալ ա՛յդպիսի գործի
մը շարժառիթը: Ձեր գերդաստանին մէջ
խենդեր եղած են:

— Զ՛եմ գիտեր:

— Ապսէնթ կը խմէ՞ք:

— Երկու երեք անգամ խմած եմ:

— Ի՞նչ եղաւ ուրեմն ձեր նպատակը:

— Ես յոգնած էի կեանքէ: Բայց չ՛ու-
զեցի անձնասպան ըլլալ, վասն զի լուծում
մը չ'է այս բանս. հետեւեալէս ուզեցի նոր
կեանք մը սկսիլ թողլով հին կեանքս: Կ'ու-
զեմ գիտնալ թէ արդեօք պիտի կրնամ
յաջողիլ առանց պարտական մնալու ո՛չ իմ
ծնողաց, ո՛չ իմ ազգականաց կամ բարեկա-
մաց եւ ո՛չ ալ իմ ծանօթից: Հետեւեալէս
որոշած եմ արհամարհել ապրելու դժուա-
րութիւնն առանց դրամագլխի, առանց
նիւթի, առանց բարոյականի: Եթէ ըսելու
ըլլամ անունս, իմ ո՛վ ըլլալս պիտի յայտ-
նուի. ա՛յն ատեն կրնայ գտնուիլ մէկը՝ որ
կարեկցելով ինձ զիս պահանջէ. եւ փոր-
ձառութիւնը չը կրնար ըլլալ յայնժամ կա-
տարեալ պայմանաց մէջ:

Իսկ գալով իմ զգեստուցս, ես զանոնք
ոչնչացուցի, որպէս զի կարենամ ըսել թէ
ես աշխարհ եկայ բան մը չ'ունենալով: Կա-
րելի է որ ես իմ այս փորձիս մէջ անյաջող
ելնեմ. բայց մէկ անգամ փորձած կ'ըլլամ
գոնէ: Եթէ յաջողեալ ըլլամ, պիտի բերի-
րիմ մտածելով որ մերկ եւ միայնակ ըլլալով
աշխարհի վրայ, ապրելու միջոց մը գտայ,
գուցէ բարձրանալով մինչ յանկախութիւն
եւ ի հարստութիւն:

— Բայց ներեցէք ինձ ըսել ձեզ թէ ձեր
փորձառութիւնը շատ գէշ կ'սկսի: Դուք
դեռ նոր կը գտնուէիք Սէնի եզերքը, որ
հասարակաց գթութիւնը ձեզի ուտեստներ
հայթայթեց. այնուհետեւ զգեստ հագցու-
ցին ձեզի եւ ձրի բնակարան մը տուին,

ա՛յնպէս որ դուք այժմէն տէր էք դրամա.
գլխի մը՝ զոր ո՛չ գորութեամբ շահած էք եւ
ո՛չ ալ ճարտարութեամբ: Թէ որ հասկնալ
կ'ուզէիք իրօք թէ ի՞նչ բանի կարող էք,
պէտք էր որ վայրենեաց երկիր մը երթա-
յիք: Ասկից վատ դուք կենաց մէջ չ'ը պիտի
մտնէք կատարեալ դիրքով մը. վասն զի
բանտէն դուրս ելած ատեննիդ, իբրեւ ա-
ռաջին դրամ պիտի ունենաք դատական
թղթեր:

— Ճշդիւ պարագայից այս մրցումն է որ
կը հաստատէ հաւասարակշռութիւնը: Եթէ
ընկերութեան պարտիմ ա՛յն առաջին օգ-
նութիւններն որով օգտեցայ, նմա պար-
տիմ նաեւ իմ գոյութեանս առաջին դժ-
ուարութիւնը: Վայրենեաց երկրի մը մէջ
մարդ չը պիտի օգնէր ինձ արդարեւ, բայց
դատաւարտող ալ չը պիտի ըլլար: Եւ որով-
հետեւ ես իմ փորձս կ'ընեմ քաղաքակըր-
թեալ ընկերութեան մը մէջ, հետեւեալէս
անոր շահն ու փնասը միանգամայն կ'ըն-
դունիմ:

— Սակայն ուրիշ առարկութիւն մը կայ
զոր չ'էք մտածած: Ի՞նչ որ ալ ըրեր էք ո-
չընչացնելու համար ձեր ունեցած անձնա-
կան բաները, դուք չ'էք կրցած մերկանալ
այն ժառանգական յատկութիւնները՝ զորս
պարտիք ձեր ծնողաց, ո՛չ ձեր ստացած
դատաւարականութիւնը, ո՛չ ալ ա՛յն կարգ մը
զաղափարներն ու եղանակները, որ ձեզի
առանձնաշնորհութիւն մը կուտան բազմա-
թիւ մարդոց վրայ:

— Ես կ'ըսեմ թէ ձեր այդ ըսածները
շատ նուազ արժէք ունին իմ ունենալիք
գթութեանց համար: Սակայն գուցէ
ստոնք փոխարինուին աշխատութեան սո-
վորութեան պակասութեամբ, գործնական
իրաց անփորձութեամբ եւ ուղեղային մշա-
կութեան մը ներած ջղային տկարութեամբ:

— Եթէ միայն այսչափ է ըսելիքնիդ, կըր-
նաք նստիլ:

Նախագահը քանի մը խօսք ըրաւ իւր
ընկերաց հետ եւ ըսաւ.

— Վճիռն ու թն օրէն պիտի տրուի:

Այս յետաձգութիւնն անհանգիստ ըրաւ
պարոն տ'Արվիլն, որ վախճաւ շատ խօսած
ըլլալու եւ յանգէտս վտանգաւոր տեղեկու-
թիւններ տալուն համար: Սակայն ա՛յնպիսի
բան մը չը կար: Հետեւեալ շաբթուն ամ-

բաստանեալը նորէն դատարան բերուեցաւ, որպէս զի լսէ իւր վճիռը՝ որ այսպէս խմբագրեալ էր .

«Դատարանը,

«Նկատելով որ հաստատուած եղելու թիւն մի է որ ամբաստանեալը Սէնի մէկ եզրին վրայ գտնուած է կատարեալ մերկութեան վիճակի մէջ . թէ լաւ մը լուսցած ժամանակ այս հասարակութեան առջև բաց տեղւոյս վրայ բազմաթիւ մարդիկ կրցան տեսնել եւ տեսան այս տեսարանս . թէ հետեւաբար ամբաստանութեան առարկայ եղող գործը անսկարկելիութեան ամէն պայմանները կը բովանդակէ յինքեան .

«Նկատելով որ պատժական օրինաց 330-րդ յօդուածն այսպէս խմբագրեալ է թէ . Ո՛վ որ անպարկեշտութեան գործ մը գործելու ըլլայ, երեք ամիսէն մինչեւ մէկ տարի բանտարկութեամբ եւ տասն եւ վեց ֆրանքէն մինչեւ երկու հարիւր ֆրանքի տուգանքով կը պատժուի .

«Բայց նկատելով որ դիտաւորութիւնն եղեռնական գործին մէկ անհրաժեշտ տարրն է, թէ առանց դիտաւորութեան եղեռն չը կայ, եւ թէ այս գործիս մէջ ըստ արձանագրութեան պաշտօնէից, ըստ վկայութեան վկայից եւ ըստ բացատրութեանց՝ զորս ամբաստանեալը տուաւ դատարանին, այս մարդս բնաւ դիտաւորութիւն չունէր հրապարակային տնտեսականութիւն մը գործելու .

«Նկատելով որ իրեն վերագրեալ գործը մտաւորական շփոթութեան մը արդիւնքն է, թէ վարչական իշխանութեան անկ է արգելուլ քաղաքին բարեկարգութեան հակառակ եղող այսպիսի գործերը, սակայն դատարանը չը կրնալով պատիժ մը տնօրինել այնպիսի մէկու մը՝ որ իւր դադարաբաց շփոթութեամբ աղատ է ամէն պատասխանատուութենէ .

«Աղատ կը թողու ամբաստանեալը : »

Պարոն տ'Արվիլ արդարացած էր . սակայն նա չէր թողած դեռ իւր զարմացումը, երբ իւր արձանագրութեան ջնջումէն վերջը դուրս ելած ատեն, յանձնուեցաւ պաշտօնէից ձեռքն որոց գործն էր տանիլ զանի յիմարանոց :

Թարգմանեց

ԿԱՍՏՈՆ ՊԵՐՃԸՆԷ ԳԱՅՐԻԷԼ ԳՐԱՍԵՐԵԱՆ
(Մանցեալն յաջորդ Բաժնի)

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԽՍՂԱՍԱՑՈՒԹԻՒՆՔ

ԿԱԼԱՑԿԱՅԻ ԵՒ ՍԻՒՐՄԵՆԻՈՅ ԲՆԱԿՁԱՅ

Ա.

Դիմացն ի վեր կուգաս դուն խլովալով,
Հագած կապած էիր գը¹ կարմրով, ալով .
Գեղի տեսնող աշուղը ժուռ կուգայ լալով :
— Վա՛յ իմ արեւուս, զատէդ առնում, Ո-
վանէս :

Լերին կողնած², գիտեմ թէ մէն³ ես,
Հետս չես խօսիր . գիտեմ թէ քէն ես .
— Վա՛յ իմ արեւուս, զատէդ առնում, Ո-
վանէս :

Գումերը⁴ կ'աւլես . ոտուիդ կուղոտես⁵ .
Մտնելով ելլելով փէշերդ մաշեր ես,
Երեսիդ զիլիֆներ բովէ քով քաշեր ես,
— Վա՛յ իմ արեւուս, զատէդ առնում, Ո-
վանէս :

Պէտքին⁶ տէրը էղառ⁷ անցու արեգին .
Գիշուն⁸ տէրը գահր ու պէնտ է ծոմակին⁹ .
— Վա՛յ իմ արեւուս, զատէդ առնում, Ո-
վանէս :

Ովանէս ըսածը հողէն կու հօնդէր¹⁰,
Հարիկ մարիկ չունէր ո՞վ պիտի մօն գէր¹¹ .
— Վա՛յ իմ արեւուս, զատէդ առնում, Ո-
վանէս :

Շատ կուճ հալ էր¹² կէնճ կտրիճը մեռնիլը,
Հարսը քըղբին տակէն երկիր առնելը¹³ .
— Վա՛յ իմ արեւուս, զատէդ առնում, Ո-
վանէս :

Ովանէս ըսածը մէկ պզտի նէղուղ¹⁴,
Թուվանքին ունի արծաթ պիլէզուղ,
Հայ ու տաճիկ վա՛յ կ'ըսեն, եազուղ,

— Վա՛յ իմ արեւուս, զատէ՛դ առնում, Ո-
վանէս :

Մեծամեծ աղբարը մահըէմէն դնաց
Մենծերուն սիրտը դողաց ու տըփաց :

— Վա՛յ իմ արեւուս, զատէ՛դ առնում, Ո-
վանէս :

Հաւաքեց

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՅ

1. Հագած կապած էիր դը. — հագած կապած.
ներդ, կամ՝ հագած կապած էիր դու :
2. Լերին կողնած. — Լերին կանգնած :
3. Մէն. — մինակ :
4. Գումեր. — գումանանոց . յոգ. գումեր :
5. Կուղոտին. — կոյ, աղբ, կոյոտել, աղբոտել :
6. Պէտք. — գեղեցիկ, սիրուն, լաւ :
7. Եղառ. — էառ, առաւ :
8. Գեշ. — տգեղ, անպէտ :
9. Նումակ, ծըմակ. — ձոր ձիւնով լի, ուր արեւ
չը ծագիր :
10. Հոնգել. — հանգել, հանգչիլ :
11. Մօն գալ. — ման գան գալ : Մօն գէր, որո-
նէր, փնտռէր :
12. Կուճ հալ. — « կիւճ հալ », դժուար վիճակ :
13. Հարսը քըղքին տակէն երկիր առնելը. — քօղ-
քի տակ եղած հարսը օտարէն յափշտակուիլ :
14. Պղտի նէղուղ. — փղերիկ և քնքոյշ, « նազիկ ».

ԺՈՅԼ ՏՂՈՒՆ ՀԱՌԱՉԱՆՔԸ

(ԳՆԻԱՌԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ)

— Երնէ՛կ ձեզի ազատ թռչունը
Որ չունիք դուք դպրոց ուսմունք,
Դպրոց խեց ազատութիւնս
Ահա թուեմ թշուառութիւնս :

Աչքս բացի թէ չը բացի
Այս տեղ կապուած ես մնացի,
Տղան ինչո՞ւ կ'ըսուի տղայ
Թէ չը խաղայ որ զօրանայ :

Ա՛յս էն սիրուն ուլ ու գառներ
Ինչպէ՞ս թռչին այնպէս վեր վեր,
Քանզի Աստուածն ամեն փոքրին
Խաղալ խնդալն ըրաւ բաժին :

Ո՛հ դպրոցիս իմ չարչարանք
Աստուած սեպէ ապաշխարանք,

Զի տուն հրաման, դպրոց հրաման,
Նստելս հրաման, կայնելս հրաման,
Թի հի՛ հէ՛ հէ՛, ա՛ռ քեզի բանտ
Ուր անշղթայ կապուած է մարդ :

Միայն մէկ բան աս դժոխքիս
Քաղցր երեւցաւ տխուր սրտիս,
Բարով խերով դար վագանցան
Ան ալ կորի աստղանման.
Ինձի՞, չէ՛ չէ՛, պէտք չես դպրոց,
Սիւնդ կործանէ Սողոմի բոց :

Ի՞նչ տի ընեմ գրել կարգալ
Ինձի պէտք է խաղալ խնդալ,
Փիլիսոփայ ըլլալու չեմ,
Տէրտէրլսէ ալ հեռի եմ,
Ինձի համար խաղ եւ խնդում
Կարծեն հազար դպրոց ուսմունք :

Լուսահոգի սլապիկս կ'ասէր
Շատ կարդացուր կը խենդենայ,
Լուսն իր հոգին մամիկս կ'ասէր
Շատ կարդացուր գէշ կը դառնայ.
Ուրեմն ինչո՞ւ այնչափ կարդամ
Որ խենդ ենեմ կամ գէշ դառնամ :

Իմ ողորմած քեռապառա ալ
Այբ քանի՞ ճիւղ ըլլալ չիտէր,
Բայց օր քառսուն քուրդ կը խաբէր.
Եւ մեր այժմու վարժապետներ
Մարաւ ակբրէն ետ կը բերէր.
Վարդապետի էլ խելը ունէր :

Մոռցայ ասել ջոջ աղաս էլ
Այբ որ տեսնէր բեն կը քաշէր,
Քառսուն հազար ոսկոյ տէր էր,
Քանց սատանէն էլ վարպետ էր,
Աչերից էլ՝ կրակ թռչէր.
Ուզած մարդուն հոգին հանէր :

Բարեւադիր կրնամ դրել
Մատնահաչւոյն ալ շատ վարժ եմ,
Երկու, երեք, հինգ էլ տաս
Քանի արաւ է՛ համբոցի,
Բաւէ կարպետս հանեմ ջրէն,
Պատառ մը հաց տի՛ չուտեմ հէ՛ :

Երթամ գտնեմ իմ ընկերներս
Շարունակեմ առջի խաղերս
Ընկուղ կաղին ճան եւ գնտակ

Այն իմ հոգւոյս են հրեշտակ .
Կարճ կտայեղով կ'ատեմ գ պրոց
Սնոր հաց է' ջուր , են սրտիս բոց :

— Ծոյլ սպառանդոյս ըսեմ վախճան .
Սա վերջ կ'ըլլայ մարդ անպիտան ,
Ո՛չ իւր անձին , ո՛չ ուրիշին
Նահ չի բերեր ամենեւին :

Ուրեմն , տղա՛յք , սիրենք դպրոց
Թէ՛ յօգուտ մեր եւ թէ՛ այլոց :

Հաւաքեց
ՏԻՓՐԱՆ Խ ՕՒՖԵՐԵԱՆ

Տ Ե Ղ Ա Ք Ր Ա Կ Ա Ն

Ռ Ն Տ Ո Ւ Ա Ն

Ձմեռուան եղանակին Սղերգէն ի Տիգ-
րանակերտ ուղեւորելու երկրորդական ա-
րահատին վրայ կը գտնուի համանուն գա-
ւառին գլխաւոր քաղաքացիական գիւղա-
քաղաքն Ռնտուան , ընդ քաղաքական իշ-
խանութեամբ Բաղէշի կուսակալութեան ,
ձուածեւ դաշտի մը վրայ շրջապատեալ Ա-
շիթան եւ Կիւրտիլան լեռներէն , Տիգրիսի
օժանդակ Արշնայ վտակին եզրն , իւր 233
տունէ բաղկացեալ , որոց 120ը Հայ , 30ը
Հայ եւ Ասորի բողոքական , 9ը Քաղդէացի ,
24ը սատանապաշտ կամ Եզդիտի , 23ը Տա-
ճիկ կամ Քուրդ եւ 23ը Ասորի :

Ռնտ-աւան , որ աղաւաղելով կը յորջոր-
ջուի Ռառ-ան , Ռնառ-ան կամ Բառ-ան , ըստ
տեղացւոց ստուգաբանութեան կը թարգ-
մանուի Գեղ-աւան , քրդերէն Ճէէ Ռնառ-ն ,
եւ սրովհետեւ յատուկ անուանց մէջ ք եւ +
տառերու խտրութիւն չի տրուիր , ուստի
կրնանք հետեւեցնել թէ սոյն ընդարձակ
գաւառն նախնեաց Աղձնիք նահանգին Քեղ
գաւառն է , որոյ աւանն է սոյն գիւղն եւ
որ փոխանակ ճիշդ Քեղ-աւան անունն
գրեւոր աղաւաղութեամբ կ'ըսուի Ռնտ-աւան ,
այսինքն Ռնառ-ն ռամկական բառին
արմատն հասկնալով Գեղ-աւան : Սոյն
գիւղն ըստ Խորենացիին Տիգրիսի եզրն եւ

ընդարձակ ու բաղմաճայ գաւառի մը գըլ-
խաւոր ղիւղաքաղաքն լինելուն հաւանակա-
նութիւն կայ նոյնն լինելուն՝ հաւատք ըն-
ծայելու , քան Քեղ գաւառն ըստ Հ. Ալի-
շանի Քղի կամ Կեղին եւ կամ ըստ Կէլ-
հուկի Պետրոս վարդապետի Քիքանն կար-
ծելու , որոց առաջինն հետի է Աղձնիք նա-
հանգէն իսկ երկրորդն փոքր եւ ոչ բաղ-
մաճայ երկիր մ'է , զոր կրնանք սեպել Սը-
ղերգի այսինքն Սէրսեհթը կամ Նէրհեթը
գաւառին մի մասն :

Ռնտ-աւանի բոլոր շէնքերն աղիւսաչէն
են , հազուադիւտ բացառութեամբ փայ-
տաչէն եւ քարուկիր , բոլորն ալ անճաշակ :
Տանիքներն ծածկուած են գերաններով ,
ցիցերով եւ հողով : Ասոնց մէջերը յատուկ
սենեակներ չը կան , այլ ընդարձակ քաղ-
ներ , որ են թէ՛ ննջարան , թէ՛ ճաշարան ,
թէ՛ բնակարան եւ թէ՛ ամեն ինչ , որոց
մէջ ձմեռուան ցուրտէն պատսպարուելու
համար կը վառեն գետնաչէն կրակարան (օ-
ճան) առանց ծխնելոյղի եւ առանց ուղ-
ղահայեաց ծակ մը իսկ ունենալու : Ուստի-
մասն հարկադրեալ չըլելով տանն երեսն ,
այցեւելով բնակչաց կոկորդիներն եւ լացնե-
լով անոնց աչերն , շեղակի դուռած նեղ պա-
տուհաններէն դուրս կ'ելնէ . այս պատճա-
ռաւ տանեաց գերաններն այնպէս սեւցած
եւ մրուրներն վար կախուած են որ տեղա-
ցիք իրենց տուն օտարի մը ներկայացնելու
ատեն կ'ըսեն , Մեր տանց առաստաղն երե-
նոսով ծածկուած է : Աւելորդ չեմ համա-
րիր յայտնել որ սոցա բնակարաններուն մէջ
ծխնելոյղ եւ ուղղահայեաց ծակ չը չինուե-
լուն պատճառն երկրւոյն է . զի կը վախ-
նան թէ երբ շրջակայքը նստած լինին , ինչ-
պէս միշտ սովոր են ընել , թշմամիք գուցէ
դան տանիքէն կրակին վրայ վառօդ կամ
փոքր սուրբներ ձգելով մահուան առիթ
տան :

Ռնտ-աւանն ըստ բարիքեան միջօրէին
կը գտնուի 39⁰ , իսկ հիւսիսային լայնու-
թեան գրեթէ 38⁰ աստիճանաց ներքեւ :
Միջագետաց սահմանակից , ղիրբով խիստ
ցած եւ ծառերէ զուրկ լինելուն գլխա-
ւորապէս ամրան եղանակի երեք ամիս-
ներուն մէջ սոսկալի տաք կը լինի եւ Ռէօ-
միւրի ջերմաչափն մինչ 40⁰է աւելի կը բարձ-
րանայ . կլիման է յոյժ մնասակար որոյ առ-

թիւ տեղացւոց շատեր ընդ միշտ ամրան դատապարտեալ են ջերմի, աչացաւի, գըլխացաւի եւ հիւանդութեանց։ Իսկ օտար պանդուխտք ստիպուած են օգտւորութեան եղեւ յայնժամ ի Քէհքէնտ գիւղ որ հեռի է տեղէս իբր վեց ժամ եւ կամ այլուր։ Տեղւոյս մէջ երեք եղանակ կայ, գարուն, ամառ, աշուն։ Ռնտուանաբնակ ժողովրդեան խմելիք ջուրն վտակայ ջուրն է։ Կ'ուզէ յստակ լինի, կ'ուզէ պղտոր, բայց համեղ է։

Ռնտ - աւանի սահմանն, որ է հիւսիսէն խնք եւ վասիտ, հարաւէն՝ Սուլան եւ Պիտպարքի, արեւելքէն՝ Ճմարիպ եւ Սէվաիք, արեւմուտքէն՝ Սիլխար եւ Տուշայ գիւղերն, իբր 120 ժամ տարածութեամբ երբէք չեն օգտուիր այս վտակէն իրենց արտօրայք ջրելով։ այլ միայն եղբրքն սեխաստաններ կը շինեն, որոց արտադրած սեխն և ձմերուկն անուանի է, մանաւանդ սեխն որ ամբողջ տարի մը առանց մշտաուելու կը պահուի եւ հետու երկիրներ ալ կը դրկուի։ Սեխին կուտեն ալ կը հաւաքեն, ծեծելով ջուրն կ'առնեն եւ տեսակ մը բրինձապուր կը շինեն պահոց օրեր, որ ոչ նուազ կաթնապուրի համ կուտայ։ Ռնտ - աւանն ունի հինգ թաղ Եգիտի, Ասորի, Հայ եկեղեցւոյ, Մզկիթի և Գետեգեր թաղ անուամբ։ Գիւղին մէջ կայ մի բերդապալատ բլրակի մը վրայ շինուած, որ նախապէս գիւղիս երեւելի Միրզայ Եգիտի ինքնիշխան պետին բնակավայրն է եղեր։ Ետոյ Օսմանեան կառավարութիւնն գրաւելով կառավարական պալատ ըրած է, բայց այժմ աւերակ կը մնայ։

Տեղացի Հայք ունին սուրբ Գէորգ անուամբ մի եկեղեցի, որոյ բակն ալ սուրբ Աստուածածին անուամբ մի ամառնային աղօթատեղի եւ մի դպրոց իրենց նիւթական օժանդակութեամբ ընդ հովանաւորութեամբ Հայոց Միացեալ Ընկերութեանց, որ ունի երկու ուսուցիչ, Կարապետ Տէր Խաչատուրեան Երզնկացի, Պետրոս Միւնասեան Սղերդցի 63 աշակերտով, որ հանդերձեալ է յառաջիկայ յուլիսէն սկսելով տարուէ տարի շրջանաւարտներ տալու, որոնք պիտի կարողանան ըստ կարեաց ուսուցչութիւն ընելու շրջակայ մայրենի լեզուէ եւ վարժարանէ գլուրկ գիւղօրէից մէջ։

Բողոքականք եւս ունին աստ մի ժողովարան եւ ազգային դպրոց մի ուսուցիչով որ է Խարբերդի գլուխ շրջանաւարտներէն։ Սոյն դպրոց, ըստ յայտարարութեան Խարբերդի Միսիոնարութեան Աւետարանի մէջ, բարձրագոյն նախակրթարանի վերածելու նպատակն ունին։ Բայց տակաւին նախկին ընթացքով կը շարունակեն։ Ուշագրութեան արժանի է սոյն վարժարանի սանուց հայերէն խօսակցութիւն ուսուցանելու հոգատարութիւններն, որք միանալով Միացեալ Ընկերութեանց ճգանց հետ ապագայ սերունդն քրդախօսութենէ ի հայախօսութիւն պիտի առաջնորդեն անշուշտ։

Քաղղէացիք եւ Եգիտիք աղօթատեղի եւ վարժարան չ'ունին, Տաճիկներն լոկ մեղկիթ մը, իսկ Ասորիք եկեղեցի մը իբր 30 տարուան շէնք եւ մի ազգային ծաղկոց իրենց երէցին ուսուցչութեամբ որ այս ամիս բացուեցաւ շնորհիւ սուրբ Գէորգ Ասորի վանքին վանահօր տեղս տուած այցելութեան։ Գիւղին մէջ 25-30 խանութէ բաղկացեալ փոքրիկ շուկայ մը կայ, որոյ մէջ ծախուելիք նիւթերն առաւօտուն քամակով կը տարուին իսկ երեկոյին կը բերուին, բան որ չափացոյց մ'է տեղւոյս ապահովութեան։ Բնակիչք առ հասարակ տըգեղ, կարճահասակ եւ միջահասակ ին։ Թողովուրդն ընդհանրապէս աղքատ է, բաց ի 4-5 անձերէ, որոց ամեն կարողութիւնն իբր 150 տկան ոսկի կը համարուի։ սոցա աղքատութեան պատճառն այն է թէ տարւոյ մէջ միայն երեք ամիս կ'աշխատին և ինն ամիս կը մսխեն։ Գլխաւոր զբաղումներն են ներկարարութիւն, կօշկակարութիւն, հողագործութիւն, խանութպանութիւն եւ բրտութիւն որոց ձեռագործերն իրենց տեսակին մէջ բարակութեամբ, ճարտարութեամբ նշանաւոր են։ Տօնավաճառ չը կայ, առեւտուրն անձուկ վիճակի մէջ է, չրջակայ տօրոնի, գլխորի եւ բերքերու գիներու չափազանց անկման պատճառաւ։

Ռնտ-աւանի Հայոց ազգային վիճակն և կացութիւնն տխուր է, մայրենի լեզուն իսպառ խոյս տուած է, ազգեցիկ եւ պատկառելի մեծեր չ'ունին, զիրենք ընդ միշտ սիրաշահող, մսիթարող, հոգեւոր քարոզիչ մը չ'ունին։ Սակայն ասոնց հակառակ գո-

վերի է իրենց դպրոցական եռանդն, որոյ ապացոյց այն է թէ 20-25 տարիներէ ի վեր վտրժարան կը պահեն, Միացեալ ընկերութեանց կը նպաստեն շնորհիւ Հայր Կ. Վ. Մալխասեանի հաստատած կրթական ընկերութեան, որոյ դրամները դժբաղդարար հատնելու վրայ են, զի բաժանորդ եւ այլ եկամտի աղբիւր չ'ունին: Աչքի զարնելու կէտ մ'է նաեւ թէ տեղացիք կիրակիներն խստութեամբ կը պահեն, առանց ո' եւ է աշխատութեան: Այն օրեր, տեղացիք կը յաճախեն միայն յեկեղեցի եւ ապա ի խօսարանն ազգային եւ կրօնական նիւթոց, որ հաստատուած է 1885 հոկտեմբեր ամսէն ի վեր:

Կ. ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
Ռնտ — աւան, 15 մարտ

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՆՆԵՐԸ

Թիի 21.	(Մասիս Թիւ 3814)
» 27.	» » 3820)
» 28.	» » 3820)
» 29.	» » 3821)

ԽՆԴԻՐ

Թիի 30.

Կոնստնտնուպոլիսի 1 լիբր պարունակութիւն ունի: Վերին բերանի տրամագիծն է 0 մ: 25 և լի է ջրով և սնդիկով: Սոյն երկու հեղուկներու ծանրութիւնք հաւասար են:

Գիտնալով որ սնդիկի խտութիւնն է 13.598, գտնել ջրոյ խաւին թանձրութիւնը:

Թիւ 27 խնդրոյ լուծումն ստացած չը լինելով, կ'սպասենք միջեւ որ ուղիղ լուծումներ ստանանք:

Տ. Կ. Ռ. Իւսկիւտար. — Եթէ խնդրոյ յառաջադրութիւնը գրած լինէիք, ինչպէս է մե, պայմանը, պիտի տեսնէիք թէ շրջանակին մէջ ներգծելի պատկերը ուղղանկիւն մը չ'է այլ հաւասարասրուն եռանկիւն մը:

ՇԱՐԱԹԱԿԱՆ ՍՈՒՐ ՀԱՆ ԴԱԿ

23 Մայիս 1886

Վերջապէս ստուգուեցաւ Կարկուրեան դատին նկատմամբ տարածուած գոհացուցիչ լուրը, թէ Բ. Դուռը վաւերացուցած է Պետական Խորհրդոյ ծանուցեալ վճիռն որով չ'եղեալ կը համարուի Կարկուր էֆէն, ախի Երուսաղեմայ վանուց դէմ ձեռք բերած Իլամն: Այս կերպով վերջ կը գտնէ համայն ազգին մտահոգութիւնն պատճառող խնդիր մը, շնորհիւ արդարադատութեան կայսերական կառավարութեան եւ անխոնջ ջանից Ս. Պատրիարք Հօր: Սուրիացի փաստաբանն եթէ դարձեալ երազէ տիրանալ Հայոց այդ կարեւոր սեպհականութեան, որոյ համար իւր ձեռք բերած բոլոր որոշումներն ու վճիռները չ'եղեալ եւ անզօր կը հսկակուին այժմ, նոր դատ մը բանալէ ուրիշ միջոց չ'ունի:

Ազգային լրոց մէջ յիշատակութեան արժանի է Եկեղեցական Համագումար Ժողովն որ պիտի գումարի ի Ս. Էջմիածին, ըստ հրաւերի Վեհ. Մակար Կաթողիկոսին, ըզբաղելու համար եկեղեցական ծիսական տարութեան վերաբերող եւ այլ խնդիրներով: Ամեն երկիրներու Հայոց հողեւոր ներկայացուցիչք պիտի մասնակցին այդ ժողովին:

Այս հինգշաբթի օր Ս. Համբարձման տօնին առթիւ, Ազգ. Հիւանդանոցի մատրան մէջ հանդիսաւորապէս տօնուեցաւ յիշեալ հաստատութեան տարեգարծն և մաղթանքներ ու օրհնութիւններ եղան բարեյիշատակ հիմնադրին՝ Պեղծեան Ամիրայի հոգւոյն համար: Կիրակի օրն եւս պիտի տօնուի Ազգային Սահմանադրութեան տարեգարծը. առաւօտուն պիտի պատարագէ Ամեն. Խորմեան Հայրիկ որ Ամեն. Ս. Պատրիարք Հօր հետ պիտի նախադահէ ապա սեղանին:

Յորմէ հետէ վերջին անգամ Վանէն մայրաքաղաքս վերադարձած է Ա. Հայրիկն, գրեթէ ամեն ազգային եւ եկեղեցական

հանդէսներու նախագահելու կը հրաւիրուի, եւ ամեն ուրեք իւր հոգեշունչ խօսքերով կը քարոզէ, կը յորդորէ ժողովուրդն: Բայց եթէ Պոլսոյ Հայք սիրով կ'ողջունեն Ն. Սրբազնութեան ներկայութիւնն, միւս կողմէ Վասպուրականի ազգայինք գուցէ նոյնքան կը վնասին նորա բացակայութենէն: Առաջնորդական Տեղապահ Պօղոս եպիսկոպոսի դէմ գանգատներն ա՛յն աստիճան սաստկացած են, որ Վարչութիւնը կը խորհի անմիջապէս առաջնորդական ընտրելեաց ցանկ մը ղրկել եւ ընտրութիւն կատարել տալ: Լուր առնուած է թէ Վանեցիք հետամուտ են Պատրիարքական Փոխանորդ Գեր. Ռուսճուբէան Հայրն ընտրել իրենց Առաջնորդ: Ն. Գերապատուութիւն՝ իբր լուրջ, անկողմնակալ եւ վարչային գործոց յայտ փորձառու եկեղեցական մը՝ կըրնայ օգտակար ծառայութիւններ մատուցանել Վասպուրականի նման ընդարձակ վիճակի մը մէջ: Եթէ Վանայ Գաւառական Ժողովը իւր քուէով իրականացնէ ժողովորդեան այս իրջը, բնականաբար Ռուսճուբէան Հայրն պիտի հրաժարի Պոլսիւրիոյ եւ Բուսէլիի հայոց հովուութեան պաշտօնէն:

* * *

Ներքին լրոց մէջ, յիշատակութեան արժանի է ցաւալի արկած մը որ պատահեցաւ այս չորեքշաբթի օր, Նիկոմիդիայէն Հայտար-Փաշա եկող երկաթուղւոյ գծին վըրայ: Մայիս 29-ի մօտերը, կառավարման գծին մէկ զատիվայր կողմը բաղխելով սայլի մը որ իւր ճանքուն վրայ կը գտնուէր, քանի մը մահ պատճառեց եւ բազում մարդեր վիրաւորեալ թողուց: Վեց հայ զործաւորք եւ մէկ յոյն պաշտօնեայ սպաննուած են նոյն ժամայն, մեքենավարն եւ իւր երկու օգնականը ծանրապէս վիրաւորուած են: Ուրիշներ ալ կան քիչ չափ վնասուած: Երկաթուղւոյ արկածը շատ քիչ անգամ կը պատահին ի Թուրքիա, մինչ Եւրոպիոյ համար օրական դէպքեր են: Կառավարման քաղաքականք, գծերէ չեղիլ, եւ. եւ սակայն չորեքշաբթի աւուր արկածը ո՛չ նուազ սրտաճմիրի է. ամեն կողմէ օգնութիւնք փութացած են եւ վիրաւորեալք կը դարմանուին հիւանդանոցաց մէջ: Հայազգի մեռ-

եալք՝ ամենքն ալ պանդուխտ՝ թաղուեցան նախընթաց օր ի Գատը-գիւղ. այս արկած շատ տխուր տպաւորութիւն թողած է մայրաքաղաքիս ամեն ազգի բնակչաց վրայ անխտիր:

Տ. Ա.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ֆիկարօ կը ծանուցանէ թէ Նաբոլէոն Իշխանն Ամերիկա կ'երթայ, դիմաւորելու իւր Լուի որդին, որ յունիսի վերջը կ'աւարտէ աշխարհի շուրջն ըրած ուղեւորութիւնն:

— Յունաստանի Թագաւորն յունիսի երկրորդ շաբթուն մէջ կը մեկնի Աթէնքէ: Բեդերսպուրկ պիտի երթայ: Թագաւորութեան խնամակալութիւնը պիտի յանձնուի Պ. Դրիքուբիի:

— Մայիս 29ին, Վիլհէլմ Կայսրը ճաշեց իտալական դեսպանատան մէջ ի Պերլին:

— Կատանայէ մայիս 29 թուով հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ետնայի բորբոքումը նուաղելու վրայ է: Լաւան այլ եւս ժամն երկու մէդրօյէ աւելի չընթանար: Ժողովուրդը կը յուսայ թէ Լաւան չի հասնիր Նիքոլոսի կեդրոնը: Մայիս 28էն ի վեր, սեւ աւազի անձրեւ մը կը տեղայ չրջակայքը: Տեղային իշխանութիւնք գովելի ջանքեր կ'ընեն ժողովրդեան սիրտ տալու եւ զայն ամեն վտանգաց դէմ պաշտպանելու համար:

— Չարին առ Նաւատորմն ուղղեալ Հըրովարտակն եւ Մոսքուայի Գաղաքապետին ճառը տակաւին նիւթ կ'ընծայեն ոռոս մամլոյն խորհրդածութեանց, որ կը ջանայ մեղմել անոնց ծանր նշանակութիւնն, եւ հանդարտեցնել Եւրոպիոյ մէջ յառաջ եկած յուզումը: Ռուս լրագիրք կ'ըսեն ընդհանրապէս թէ, Ռուսիա վերջին տարիներս ա՛յնչափ հաւաստիք տուած է իւր խաղաղասիրութեան եւ ուղղամտութեան, որ Կայսեր եւ Գաղաքապետին խօսքերուն պատեւրազմասէր նշանակութիւն չի կրնար ընծայուիլ:

Սրտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԻՐԱԳՐՈՅ